



ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

I. Ներածություն

«ՅՈՒՔՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Յուքոմ» կամ «Ընկերություն» կամ «մենք» բոլոր հոլովաձևերով) Ծառայություններից օգտվելու և/կամ մեզ հետ բաժանորդային պայմանագիր կնքելու պահից Դուք տալիս եք համաձայնություն Յուքոմի կողմից սույն անձնական տվյալների մշակման քաղաքականությամբ (անձնական տվյալների մշակման ծանուցմամբ) սահմանված կարգով Ձեր անձնական տվյալների մշակումն, այդ թվում՝ անձնական տվյալների հարցումն իրականացնելու համար:

Յուքոմը պարտավորվում է պաշտպանել և չխախտել Ձեր անձնական տվյալների, այդ թվում Ձեր կողմից օգտագործվող Ծառայությունների, դրանց վայրի, նպատակի, նպատակակետի, ծավալի և այլ տեխնիկական պայմանների վերաբերյալ ցանկացած տեղեկության գաղտնիությունը:

Անձնական տվյալների մշակման մասին սույն ծանուցման (այսուհետ՝ «Ծանուցում») մեջ նկարագրվում է Յուքոմի «Ընդհանուր դրույթներ և պայմաններ»-ում (այսուհետ՝ ԸԴՊ) սահմանված անձնական տվյալների պաշտպանության՝ Յուքոմի որդեգրած քաղաքականությունը և անձնական տվյալների մշակման ձևը/կարգը: Սույն Ծանուցումը կիրառելի է Յուքոմի հետ առնչվող ցանկացած կայքէջի, ապրանքի, ծրագրային ապահովման կամ ծառայության համար (այսուհետ միասին՝ «Ծառայություններ»), եթե սույնից տարբերվող այլ ծանուցում գրավոր սահմանված չէ Յուքոմի կողմից:

Ժամանակ առ ժամանակ մենք կարող ենք փոփոխություններ կատարել սույն Ծանուցման մեջ: Հետևաբար, հորդորում ենք Ձեզ պարբերաբար այցելել այս կայքէջը՝ համոզվելու համար, որ փոփոխությունները ընդունելի են Ձեզ համար:

Օգտվելով մեր Ծառայություններից՝ Դուք ընդունում եք սույն Ծանուցումը:

II. Անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը

Ձեր անձնական տվյալները մշակվում են՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթները, ՀՀ կառավարության 16/02/2017 թ.-ի թիվ 192-Ն որոշումը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 08/07/2011 թ.-ի թիվ 285-Ն որոշումը, Ձեզ հետ կնքվող/ված Բաժանորդային պայմանագիրը, դրա անբաժանելի մասը հանդիսացող ԸԴՊ-ն և սույն Ծանուցումն ընդունելու արդյունքում ստացված Ձեր համաձայնությունը:



III. Մշակվող անձնական տվյալների ցանկը, դրանց հավաքագրման եղանակը և անձնական տվյալների հետ կատարման ենթակա գործողությունների ցանկը

Անձնական տվյալների մշակումն անձնական տվյալների հետ մեխանիկական և/կամ տեխնիկական միջոցներով որոշակի միջոցառումների և գործողությունների իրականացումն է, այդ թվում՝ անձնական տվյալների հավաքագրում, մուտքագրում, համեմատում, համակարգում, պահպանում, փոխանցում, ուղղում, ուղեփակում, թարմացում, փոփոխում, տարածում, ոչնչացում, ապանձնավորում և բլոկավորում, օգտագործում, ուսումնասիրում, սույն Ծանուցմամբ սահմանված նպատակներին հասնելու համար այլ գործողություններ:

Մեր Ծառայություններից օգտվելու համար, նման մտադրություն ունեցող անձը պարտավոր է ներկայացնել ստորև թվարկված անձնական տվյալները՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով.

Իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝

ա) ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի տվյալները, անուն, ազգանուն (հայրանուն), ծննդյան ամսաթիվ, հաշվառման և/կամ փաստացի բնակության հասցե,

գ) ներկայացուցչի հեռախոսահամար:

Ֆիզիկական անձի դեպքում՝

ա) Տվյալ անձի և ներկայացուցչի (առկայության դեպքում) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ, սպայական գրքույկ կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ՝ անձը հաստատող փաստաթուղթ) տվյալները, անուն, ազգանուն (հայրանուն), ծննդյան վայր և ամսաթիվ, հաշվառման և/կամ փաստացի բնակության հասցե

բ) Հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե:

Դուք պարտավոր եք ապահովել տրամադրվող տեղեկատվության ճշգրտությունը, արդիականությունը և հավաստիությունը և պատասխանատվություն եք կրում դրա համար:

Բացի այդ, անձնական տվյալները մշակելու հավաստիության և սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքներն ապահովելու, ինչպես նաև Ծառայությունների շրջանակներում հաճախորդների/բաժանորդների սպասարկման որակի բարելավման և հաճախորդների վճարունակության գնահատման նպատակով Յուքոմն իրավասու է դիմել երկրորդական աղբյուրներին, մասնավորապես՝ պետական տեղեկատվական համակարգի օպերատորին և վարկային պատմություն հավաքագրելու կամ վարկունակության գնահատում իրականացնելու համար լիազորված երրորդ անձանց (օրինակ՝ վարկային բյուրո)՝ ստորև նշված Ձեր անձնական տվյալները պարունակող տվյալների բազաներից անձնական տվյալների ստացման համար.



1. ՀՕՀ,
2. Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ՝ սերիա, համար, տրման ամսաթիվ, տրամադրող մարմնի տվյալները, վավերականության ժամկետ, կարգավիճակ(գործող, անվավեր),
3. Անուն, ազգանուն, հայրանուն,
4. Հաշվառման հասցե,
5. Ծննդյան ամսաթիվ,
6. Հարկադիր կատարման ծառայությունում տվյալ անձին վերաբերող տվյալներ՝ կատարողական վարույթի առկայություն, արգելանքի առկայություն, ամսաթիվ, արգելադրված գույքի չափը, պարտավորության չափը,
7. Ֆինանսական կազմակերպություններում պարտավորության առկայության մասին տեղեկություն, պարտավորության չափը:

Քանի որ մենք Ձեր անձնական տվյալները մշակելու ենք այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է IV բաժնով սահմանված նպատակներին հասնելու համար, այն անձնական տվյալները, որոնք ստացվում են Ձեզանից, երկրորդական աղբյուրներից չեն ստացվելու:

IV. Ձեր տվյալների մշակման նպատակները

Ձեր անձնական տվյալները կմշակվեն միայն Ընկերության կողմից մատուցվող Ծառայությունների շրջանակներում: Ձեր անձնական տվյալները կարող են մշակվել հետևյալ նպատակներով.

1. Ծառայությունների պատշաճ մատուցում, հաճախորդների/բաժանորդների սպասարկման որակի բարելավում
2. Ձեր վճարունակության գնահատում,
3. Ձեր ինքնության հաստատում (նույնականացում),
4. Ձեր անձնական տվյալների ճշգրտում կամ թարմացում,
5. պարտքերի հավաքագրմանն ուղղված միջոցառումների իրականացում,
6. տեղեկատվական կամ գովազդային տեքստային կամ ձայնային հաղորդագրությունների ուղարկում,
7. Ծառայությունների կամ պարտքի վերաբերյալ ծանուցումների տրամադրում,
8. ՀՀ էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենսդրությամբ սահմանված այլ նպատակներով:

V. Որքա՞ն ժամանակ են պահպանվում Ձեր տվյալները



Մենք պարբերաբար վերանայում ենք անձնական տվյալների պահպանման ժամկետները՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության պահանջների և Ընկերության որդեգրած քաղաքականության:

Ձեր անձնական տվյալները կպահպանվեն մեր համակարգերում Յուբումի ընթացակարգերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված տևողությամբ:

VI. Ու՞մ են հասանելի Ձեր տվյալները

Դուք թույլատրում եք մշակման նպատակով Յուբումի կողմից Ձեր վերաբերյալ անձնական տվյալների փոխանցումը ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ տարածքից դուրս՝ ստորև նշված երրորդ անձանց, որոնք իրականացնում են անձնական տվյալների մշակում, պահպանում և տեղեկատվության տրամադրում: ՀՀ տարածքից դուրս անձնական տվյալների փոխանցումն իրականացվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Սույն Ծանուցման IV բաժնում սահմանված նպատակներով, միայն այդ նպատակներն արդարացնող ծավալով և միայն դրա անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք տրամադրել Ձեր անձնական տվյալները (փոխանակվել անձնական տվյալներով):

- 1) պետական տեղեկատվական համակարգի օպերատորին Ձեր կողմից տրամադրված տվյալների հիման վրա Ձեր մասին սույն Ծանուցմամբ սահմանված այլ տվյալներ ստանալու համար,
- 2) երրորդ անձանց, որոնք իրականացնում են անձնական տվյալների մշակում, պահպանում և տեղեկատվության տրամադրում պարտապանների կողմից իրենց պարտավորությունների կատարման վերաբերյալ,
- 3) երրորդ անձանց, որոնք Յուբումից ստացել են մատուցված Ծառայությունների դիմաց Բաժանորդի կողմից կուտակած պարտքը պահանջելու կամ դատական կարգով բռնագանձելու իրավունքը,
- 4) Ծառայությունների մատուցման մեջ ներգրավված կամ Յուբումի գործունեությանը վերաբերող ուսումնասիրություն անցկացնող Յուբումի գործընկերներին, մատակարարներին և ծառայություն մատուցողներին,
- 5) Յուբումի գործակալներին, դիլերներին, դիստրիբյուտորներին, ֆրենչայզներին կամ այլ ծառայություն մատուցողներին, որոնք իրականացնում են Յուբումի ապրանքների կամ Ծառայությունների վաճառք կամ նմանատիպ այլ գործունեություն,
- 6) երրորդ անձանց, որոնք լիազորված են հավաքագրելու վարկային պատմություն կամ իրականացնելու վարկունակության գնահատում,
- 7) Յուբումի բաժնետերերին, ներկայացուցչություններին, մասնաճյուղերին, դուստր և կախյալ ընկերություններին,
- 8) ՀՀ պետական մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



VII. Ձեր անձնական տվյալների ոչնչացումը

Յուրանը հնարավորինս խուսափում է Ձեր անձնական տվյալների կրկնողությունից և մշակում միայն անհրաժեշտ անձնական տվյալները, որոնք կարող են օգտակար լինել սույն Ծանուցման IV բաժնում սահմանված նպատակներին հասնելու համար, ինչպես նաև այլ տվյալները, որոնք անհրաժեշտ է պահպանել ՀՀ օրենսդրության համաձայն: Այլ անձնական տվյալները ենթակա են ոչնչացման:

VIII. Ձեր իրավունքները

Դուք ունեք ՀՀ Անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքով սահմանված իրավունքներ:

Դուք իրավունք ունեք ետ կանչել անձնական տվյալները մշակելու մասին Ձեր համաձայնությունը: Սակայն, այդ դեպքում, մենք չենք կարող շարունակել մատուցել Ձեզ Ծառայություններ:

Դուք կարող եք ցանկացած պահի հրաժարվել հետագա գովազդային բնույթի տեղեկատվություն ստանալուց՝ այդ մասին տեղեկացնելով Յուրումին:

Եթե կարծում եք, որ Ձեր անձնական տվյալները սխալ են մշակվել կամ ունեք բողոք այն բանի հետ կապված, թե ինչպես են Ձեր անձնական տվյալները մշակվում, ապա Դուք Յուրումին բողոք ներկայացնելու իրավունք ունեք: Որոշ իրավասությունների սահմաններում Դուք իրավունք ունեք դիմել Յուրում՝ Ձեր անձնական տվյալները ուղղելու կամ փոփոխելու համար, եթե դրանք սխալ են կամ պետք է թարմացվեն: Դուք նաև իրավունք ունեք պահանջելու ջնջել Ձեր անձնական տվյալները, սակայն իրավական պահանջների, այլ պարտականությունների և գործոնների պատճառով միշտ չէ, որ դա հնարավոր է լինում:

Դուք կարող եք բողոք ներկայացնել Յուրումին կամ տվյալների պաշտպանության լիազոր մարմին՝ նշելով, թե Ձեր կարծիքով ինչպես կարող էր տվյալների մշակումը Յուրումի կողմից անդրադառնալ Ձեր իրավունքների վրա:

ՀՀ-ում տվյալների պաշտպանության լիազոր մարմինն է՝

ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը:

IX. Անվտանգության ապահովման գործող միջոցներ՝ Ձեր անձնական տվյալները կորստից, չարաշահումից կամ փոփոխությունից պաշտպանելու համար

Մենք քայլեր ենք ձեռնարկում Ձեր անձնական տվյալների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

Ձեր տվյալները ստանալուն պես մենք գործադրում ենք բոլոր ջանքերը՝ դրանց անվտանգությունը մեր համակարգերում ապահովելու համար: Անձնական տվյալների



պահպանման համակարգը համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովումների համախումբ է: Մեզ մոտ գործող համակարգը բաղկացած է ժամանակակից անվտանգության կանոնները ապահովող և պարբերաբար թարմացման ենթարկվող տարրերից: Համակարգը տեղադրված է մեր կազմակերպության ներսում գտնվող համակարգչային տեխնիկայի վրա, որը պաշտպանված է մեր կազմակերպությունից դուրս գտնվող համակարգչային ցանցերից և համացանցից ժամանակակից անվտանգության կանոնները ապահովող ցանցային և պաշտպանիչ ցանցային երթուղիչների միջոցով: Համակարգի անվտանգության կանոնների և անձնական տվյալների պաշտպանվածությունը անընդհատ հսկման տակ է գտնվում Յուքոմի տեղեկատվական անվտանգության բաժնի աշխատակիցների կողմից:

Անձնական տվյալները հասանելի են միայն այն աշխատակիցներին, որոնց այդ հասանելիությունն անհրաժեշտ է IV Բաժնով սահմանված նպատակներին հասնելուն ուղղված աշխատանքներ կատարելու համար: Արխիվացման ենթակա անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը ենթակա են պահպանման արխիվացման համար հատուկ նախատեսված կողպված տարածքներում:

Մեր աշխատակիցներն իրենց առօրյա գործունեությունն իրականացնում են անձնական տվյալների անվտանգության պահպանմանն ուղղված Յուքոմի քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան: Ձեր անձնական տվյալները պաշտպանելու նպատակով անձնական տվյալներ պարունակող տեղեկություն ստացող մեր բոլոր գործընկերների հետ կնքվող պայմանագրերը պարտադիր պարունակում են գաղտնի տեղեկատվության (այդ թվում անձնական տվյալների) բացահայտումն արգելող դրույթներ:

X. Համաձայնության գործողության ժամկետը

Սույն Ծանուցման ընդունմամբ տրված համաձայնության գործողության ժամկետը համապատասխանում է Յուքոմի և Ձեր միջև առկա իրավահարաբերությունների և/կամ պայմանագրային հարաբերությունների գործողության ժամկետին:

XI. Կապ մեզ հետ

Եթե Ձեզ մոտ Անձնական տվյալների մշակման մասին սույն ծանուցման կամ տվյալների գաղտնիության պաշտպանության մեր քաղաքականության հետ կապված առաջնան հարցեր, կապ հաստատեք Յուքոմի Զանգերի սպասարկման կենտրոնի հետ կամ գրեք հետևյալ հասցեներով.

Հեռ.՝ 011 444 444

Էլ. հասցե՝ 444@ucom.am

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0015, Սուրբ Գ. Լուսավորիչ 9, «Երևան Պլազա» բիզնես կենտրոն